



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15973 գործարքներ, որոնց քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել է 45.8%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ՝ 23.0%-ով:

2007թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6041 օտարման գործարքների 84.5% կազմել են առուվաճառքները, 14.6%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.1%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.4% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2007թ. հոկտեմբերին, 2007թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 18.3%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 27.7%-ով:

2007թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.5% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.4%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 7.6%-ով:

2007թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2007թ.
Կենտրոն	397000	465500	455800
Արաբկիր	313500	377300	377100
Քանաքեռ-Զեյթուն	199000	282900	282700
Նոր-Նորք	181600	245000	242800
Ավան	171100	243700	237200
Էրեբունի	169000	243900	243700
Շենգավիթ	191600	259500	254100
Դավթաշեն	203500	274400	267600
Աջափնյակ	184400	256000	248000
Մալաթիա-Սեբաստիա	174200	246400	236900
Նուբարաշեն	112600	133200	127400
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	208900	275300	270300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հոկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել են 1.8%-ով:

2007թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 536 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 1.1%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 3.5%-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	76200	111000	110900
	Ապարան	26600	30300	29000
	Թալին	27900	40200	38600
Արարատ	Արտաշատ	60900	89800	89000

	Մասիս	70100	107500	103200
	Վեդի	48000	68300	65100
	Արարատ	48000	57800	57700
Արմավիր	Վաղարշապատ	98600	139100	132500
	Արմավիր	66900	104700	99800
	Մեծամոր	44000	66100	63100
Գեղարքունիք	Սևան	44700	70500	67200
	Գավառ	29100	37900	36100
	Մարտունի	40700	56900	54200
	Վարդենիս	22100	27500	26300
	Ճամբարակ	13900	15400	15300
Լոռի	Վանաձոր	56100	77400	76400
	Ստեփանավան	27300	41200	39300
	Սպիտակ	40300	52500	47500
	Ալավերդի	22200	27500	26800
	Տաշիր	21800	27900	27000
	Թումանյան	5400	5500	5400
	Շամլուղ	3000	3200	3100
	Ախթալա	10900	12200	12000
Կոտայք	Աբովյան	114700	151100	150200
	Նոր Հաճն	78000	111600	106700
	Բյուրեղական	55700	80200	76400
	Եղվարդ	70600	101600	96800
	Հրազդան	41700	55900	55700
	Ծաղկաձոր	80600	105600	105600
	Չարենցավան	49000	69200	66000
Շիրակ	Գյումրի	55400	79400	75600
	Արթիկ	35900	48500	47500
	Մարտիկ	22700	25700	25700
Սյունիք	Գորիս	54700	78800	75100
	Կապան	53500	70800	70700
	Սիսիան	46000	57700	55100
	Մեղրի	33600	40900	40800
	Ագարակ	21900	26700	25800
	Քաջարան	28300	38900	37100
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	50100	66300	64600
	Եղեգնաձոր	63400	84100	80100
	Ջերմուկ	76100	114800	114600
Տավուշ	Դիլիջան	54900	75400	72000
	Իջևան	66000	98300	94400
	Բերդ	30500	35200	35000
	Նոյեմբերյան	24300	28900	28800
	Այրում	18000	21000	21000

2007թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել են 3.2%-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 711 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 204, մյուս մարզերում միասին վերցրած՝ 507: 2007թ. սեպտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 20.5%-ով, ընդ որում Երևանում՝ 16.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 22.2%-ով: 2006թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը աճել է 37.0%-ով, ընդ որում Երևանում ` 85.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած ` 24.0%-ով:

2007թ. հոկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները` հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2007թ.
Կենտրոն	399100	472700	472300
Արաբկիր	315500	390800	390500
Քանաքեռ-Զեյթուն	200400	287700	287200
Նորք-Մարաշ	191700	245400	243000
Ավան	172800	246200	242700
Էրեբունի	170300	249600	249100
Շենգավիթ	193400	261800	259800
Դավթաշեն	205600	277600	272600
Աջափնյակ	186000	259300	254800
Մալաթիա-Սեբաստիա	176700	249000	240200
Նուբարաշեն	115300	133900	131400
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	211500	279500	276700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել են 1.0 %-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները` հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	77700	116100	115700
	Ապարան	27900	33500	33500
	Թալին	28800	42800	42300
Արարատ	Արտաշատ	62500	95000	93900
	Մասիս	71200	110500	106700
	Վեդի	49800	69500	66900
Արարատ	Արարատ	49400	63000	62700
	Վաղարշապատ	100200	140600	137600
Արմավիր	Արմավիր	68100	106000	102000
	Սևան	46400	71500	69200
Գեղարքունիք	Գավառ	30700	40100	40100
	Մարտունի	42000	58000	56500
	Վարդենիս	23200	30700	30600

	Ճամբարակ	14800	18700	18700
Լոռի	Վանաձոր	58600	83900	82500
	Ստեփանավան	28500	44900	43200
	Սպիտակ	41500	53800	50800
	Ալավերդի	23300	30000	29900
	Տաշիր	23000	29400	29000
	Թումանյան	7200	8700	8600
	Շամլուղ	4500	5700	5700
	Ախթալա	12500	15100	15000
Կոտայք	Աբովյան	116000	157600	156300
	Նոր Հաճն	79300	115300	112800
	Բյուրեղավան	56900	81400	79500
	Եղվարդ	72100	103900	99700
	Հրազդան	43100	59700	58600
	Ծաղկաձոր	82200	162400	153400
	Չարենցավան	50200	71400	70100
Շիրակ	Գյումրի	56600	84200	81200
	Արթիկ	37100	50800	50400
	Մարալիկ	24300	28900	28900
Սյունիք	Գորիս	56100	81800	80500
	Կապան	54900	76000	75000
	Սիսիան	47700	59700	58300
	Մեղրի	35400	43700	43000
	Ագարակ	23200	28300	27800
	Դաստակերտ	8900	9800	9700
Վայոց Ձոր	Վայք	51200	67900	66300
	Եղեգնաձոր	64800	86200	84200
	Ջերմուկ	39700	62400	60600
Տավուշ	Դիլիջան	56100	79100	76400
	Իջևան	67100	100900	98800
	Բերդ	31600	38700	38400
	Նոյեմբերյան	25500	34500	33400
	Այրում	19200	22800	22800

2007թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել են 2.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 2511 միավոր /1503.58 հա/ հողեր, որից Երևանում՝ 240 միավոր /36.78 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 89 միավոր /8.41 հա/ հողեր, որից Երևանում՝ 38 միավոր /3.92 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 976 միավոր /1331.22 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /1.48 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1002 միավոր /90.67 հա/, որից Երևանում՝ 169 միավոր /19.40 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 475 միավոր /42.67 հա/, որից Երևանում՝ 56 միավոր /14.88 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 33 միավոր /20.68 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /1.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 23 միավոր /18.30 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 2 միավոր /0.05 հա/:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 2355 միավորի /1441.90 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 228 միավոր /34.05 հա/, նվիրատվության գործարքներ՝ 140 միավորի /58.16 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /1.38 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /3.52 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /1.35 հա/:

Հանրապետությունում 2007թ. հոկտեմբերին, 2006թ. հոկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 26.4%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 46.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.3 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 418.01 հա, որից 405.80 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 38.9% կամ 914 գործարքներ /734.35 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 91 գործարքներ /16.02 հա/, իսկ 60.7% կամ 1429 միավորը /707.19 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 133 միավոր /18.00 հա/:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /0.36 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	6	1.00	58	4.07	27	10.95	5	0.32	1	0.02	104	14.77	23	2.90
Արագածոտն	41	169.36	0	0.00	6	1.14	24	1.85	77	146.05	0	0.00	67	6.18	0	0.00
Արարատ	24	70.93	5	0.16	55	4.48	58	2.52	93	56.00	0	0.00	112	9.75	5	0.47
Արմավիր	52	195.89	1	1.00	7	0.51	23	0.48	152	209.91	0	0.00	129	9.91	27	0.32
Գեղարքունիք	16	2.93	0	0.00	32	1.81	26	1.93	11	17.13	0	0.00	23	2.86	4	0.14
Լոռի	3	2.06	2	0.07	11	0.91	8	0.18	53	20.69	0	0.00	17	1.56	1	0.25
Կոտայք	76	82.79	6	1.51	41	3.67	134	11.71	168	61.49	3	0.50	201	17.54	16	1.38
Շիրակ	4	5.12	1	0.32	20	0.73	14	1.13	21	54.77	0	0.00	7	0.49	5	0.96
Սյունիք	14	31.73	2	5.50	0	0.00	10	0.17	28	32.94	1	5.00	5	0.45	5	1.26
Վայոց Ձոր	21	82.29	1	0.55	0	0.00	26	1.27	7	15.94	0	0.00	7	0.46	8	0.30
Տավուշ	7	10.04	2	0.04	22	1.51	17	1.31	15	8.44	1	0.01	16	1.65	0	0.00
Ընդամենը	258	653.14	26	10.15	252	18.83	367	33.50	630	623.68	6	5.53	688	65.62	94	7.98

Ստորև ներկայացվում է 2007թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր		Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի							բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի				
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	28	2.18	6	1.00	1	0.05	21	1.13	63	13.84	0	0.00	0	0.00	57	4.02	6	9.82
Արագածոտն	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	69	172.33	41	169.36	0	0.00	6	1.14	22	1.83
Արարատ	17	0.14	0	0.00	2	0.01	15	0.13	125	77.95	24	70.93	5	0.17	53	4.47	43	2.38
Արմավիր	6	0.06	0	0.00	1	0.01	5	0.05	76	197.54	51	195.61	1	1.00	6	0.50	18	0.43
Գեղարքունիք	2	0.10	0	0.00	0	0.00	2	0.10	72	6.57	16	2.93	0	0.00	32	1.81	24	1.83
Լոռի	4	0.05	1	0.01	1	0.03	2	0.01	20	3.17	3	2.06	1	0.06	10	0.88	6	0.17
Կոտայք	10	1.13	0	0.00	1	0.06	9	1.07	247	98.55	76	82.79	6	1.51	40	3.61	125	10.64
Շիրակ	5	0.77	0	0.00	1	0.07	4	0.70	34	6.53	4	5.12	1	0.32	19	0.66	10	0.43
Սյունիք	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	24	36.34	13	30.67	2	5.50	0	0.00	9	0.17
Վայոց Ձոր	1	0.55	1	0.55	0	0.00	0	0.00	47	83.56	21	82.29	0	0.00	0	0.00	26	1.27
Տավուշ	6	0.10	1	0.002	3	0.09	2	0.01	42	12.78	7	10.04	1	0.03	19	1.42	15	1.29
Ընդամենը	82	5.10	9	1.56	10	0.32	63	3.22	819	709.16	256	651.80	17	8.59	242	18.51	304	30.26

Հանրապետությունում 2007թ. հոկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք /1.34 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հոկտեմբերին 2006թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 36.0%-ով: Ընդ որում Երևանում աճել է 15.8 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 26.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 70.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 72.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 88.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	22	102.14	38.3	622.5	149.0	57	102.96	362.2	6772.5	2812.2

Ապարան						2	1.55	90.6	767.6	379.5
Թալին	19	67.21	35.4	192.0	75.8	16	37.83	90.6	758.5	407.1
Ծաղկահովիտ						2	3.70	77.0	948.2	178.2
Արարատի մարզ										
Արտաշատ	5	47.78	29.8	499.3	125.8	41	14.57	335.1	5418.0	1507.1
Մասիս	13	11.79	72.4	6212.5	968.2	27	20.83	181.1	6772.5	1935.8
Վեդի	6	11.36	44.0	1354.4	526.4	25	20.60	203.8	4515.0	1305.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	30	108.57	12.3	2000.0	293.1	54	54.86	294.3	4063.5	965.5
Բաղրամյան	15	77.28	20.3	802.5	252.8	16	96.62	90.6	677.3	596.8
Վաղարշապատ	6	9.77	42.3	711.0	317.9	82	58.43	443.7	9030.0	1653.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								190.2	496.7	372.4
Ճամբարակ	15	2.33	200.0	1450.0	585.0	5	4.20	45.3	541.8	156.0
Մարտունի						1	0.20	45.3	1806.0	480.0
Սևան	1	0.60	1916.7	1916.7	1916.7	3	3.53	45.3	451.5	200.1
Վարդենիս						2	9.20	27.2	532.8	257.4
Լոռու մարզ										
Ալավերդի						35	1.65	163.0	2483.3	1115.5
Գուգարք	1	1.99	501.7	501.7	501.7	11	9.90	226.4	2709.0	958.7
Սպիտակ								226.4	1490.0	521.0
Ստեփանավան	2	0.06	1164.6	1192.1	1178.4	1	2.76	90.6	2257.5	373.3
Տաշիր						6	6.38	45.3	451.5	211.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	41	46.77	11.8	5680.0	590.3	87	29.11	271.7	11287.5	3550.2
Եղվարդ	9	8.31	35.9	3748.7	614.2	71	27.38	172.1	11287.5	2480.0
Հրազդան	26	27.71	78.9	76923.1	3676.8	9	4.11	113.2	2709.0	990.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.50	142.0	142.0	142.0	12	12.79	249.0	1693.1	462.5
Ամասիա	1	1.49	59.1	59.1	59.1	2	5.23	36.2	237.0	118.2
Անի						4	31.62	108.7	361.2	251.9
Աշոցք						1	1.67	45.3	165.0	116.8
Արթիկ	2	2.13	47.3	87.5	67.4	2	3.46	63.4	1083.6	177.6
Սյունիքի մարզ										
Գորիս						7	5.00	90.6	673.3	348.6
Կապան	8	12.57	83.3	639.0	250.9	5	7.04	54.3	841.6	234.2
Մեղրի	2	15.40	36.8	900.0	468.4	5	1.30	181.1	1784.2	502.3
Սիսիան	3	2.70	331.5	253.0	481.5	11	19.61	45.3	631.2	238.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	16	34.59	35.9	674.7	207.0	6	13.98	117.7	2524.8	1314.6
Վայք	5	47.70	40.9	148.4	78.7	1	1.96	54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.02	750.0	750.0	750.0			45.3	841.6	360.0
Իջևան	5	10.00	397.5	397.5	397.5	1	0.30	240.0	1683.2	826.9
Նոյեմբերյան	1	0.02	1100.0	1100.0	1100.0	14	8.14	45.3	3509.5	542.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հոկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների
---------------------------------------	--	--

	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						63	56915.7	113.2	3612.0	2336.8
Ապարան	2	2390.0	105.5	249.8	177.7	1	910.0	113.2	632.1	200.0
Թային	4	9009.0	53.2	75.6	70.0	1	2200.0	45.3	361.2	98.5
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	6	6150.0	149.0	415.0	247.6	16	17014.0	135.8	2709.0	900.0
Մասիս	47	38550.0	289.0	983.5	542.2	80	64770.0	135.8	9030.0	1168.5
Վեդի						14	14863.0	113.2	993.3	650.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						20	21201.0	135.8	2257.5	1122.6
Բաղրամյան								81.5	270.9	135.0
Վաղարշապատ	6	4983.0	687.5	690.0	689.6	108	76612.0	135.8	4515.0	1474.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3830.0	135.8	903.0	361.3
Ճամբարակ	2	735.0	106.7	120.0	113.3	1	1000.0	45.3	135.5	99.8
Մարտունի	29	15856.0	112.6	113.6	113.3	10	11970.0	90.6	451.5	244.3
Սևան	1	1500.0	188.1	188.1	188.1	4	2413.0	90.6	903.0	156.2
Վարդենիս						4	9391.0	45.3	225.8	114.1
Լոռու մարզ										
Այվերդի						6	5312.0	67.9	270.9	130.4
Գուգարք	7	5923.0	710.0	5218.5	4080.7	5	4364.0	67.9	2347.8	558.7
Սյիտակ						2	2160.0	63.4	451.5	127.8
Ստեփանավան	3	2865.0	277.2	277.2	277.2	4	3720.0	45.3	270.9	106.9
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	23	20986.0	270.0	2325.0	1376.5	95	79175.0	135.8	6772.5	1812.5
Եղվարդ	3	2060.0	1617.0	2375.1	1887.4	90	81910.0	135.8	6772.5	1944.6
Հրազդան	14	13100.0	253.0	430.0	381.1	15	13313.0	135.8	9030.0	1262.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	11	3663.2	277.3	3802.3	1755.1	4	3278.0	113.2	1535.1	326.4
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	8	2930.0	34.8	500.0	270.0	3	1600.0	67.9	925.6	165.2
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2290.0	67.9	541.8	237.1
Կապան								67.9	632.1	201.5
Մեղրի						2	1300.0	67.9	406.4	120.1
Միսիան						1	910.0	67.9	406.4	138.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						7	4625.0	67.9	1128.8	298.6
Վայք								77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	85.8
Իջևան	18	14137.0	1366.2	1495.0	1448.1	15	14883.0	67.9	1354.5	418.8
Նոյեմբերյան	1	21.0	447.1	447.1	447.1	1	1640.0	45.3	632.1	131.2

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 2.31 հա մակերեսով, 1-ական՝ Արարատի /0.10 հա/ և Շիրակի /2.21 հա/ մարզերում:

2007թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1135 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.1%: Ընդ որում, վարձակալության գործարքների 46.1% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. հոկտեմբերին 2007թ. սեպտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 48.4%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 53.8%-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 69 բնակարանների, 49 անհատական բնակելի տների, 434 հասարակական, 38 արտադրական նշանակության օբյեկտների, 539 միավոր /1301.81 հա/ հողերի և 6 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 54 վարձակալության գործարքների /այդ թվում 11 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 2.7 անգամ, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 42.1%-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 1301.81 հա հողերից 16.69 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1285.12 հա հողերի 0.65 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 77.41 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 288.95 հա, որից 211.51 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 363.10 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	1	0.20
Արարատ	0	0.00	4	82.03
Արմավիր	0	0.00	2	104.93
Գեղարքունիք	4	135.00	77	109.40
Լոռի	1	20.00	13	70.58
Կոտայք	1	120.00	34	61.40
Շիրակ	0	0.00	129	153.76
Սյունիք	13	88.10	27	123.41
Վայոց Ձոր	0	0.00	7	40.06
Տավուշ	0	0.00	4	0.76
Ընդամենը	19	363.10	298	746.53

2007թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2654 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 24.6%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.1 անգամ:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.6%/, առանձնատների /25.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.4%/ և հողերի /12.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1025 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 24.4%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 69.1%-ով:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 518.67 հա հողեր, որից 6.04 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 79.7% կամ 413.26 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում 0.08 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 250.18 հա, որից 249.11 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 6 և 0 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.04%: 2007թ. սեպտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 45.5%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 71.4%-ով: 2007թ. հոկտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 1-ական միավոր՝ Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում:

2007թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2659 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 14.0%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 60.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն